ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.12.2018
340-65

ՀՀ Արարատի մարզպետ
Գարիկ Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ պարտավոր է հրապարակել ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը:

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եվ պահպանման, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2015 թվականի N 1204-Ն որոշման 8-րդ կետի համաձայն՝ վիճակագրությունն իրականացվում է ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների: Վիճակագրական տվյալներն առնվազն պարունակում են ստացված հարցումների ընդհանուր թիվը և տեսակը: Ամենամյա վիճակագրական տվյալները հրապարակվում են տեղեկատվություն տնօրինողի պաշտոնական կայքում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաեւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածներով եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2016 եւ 2017 թվականների ընթացքում Ձեր գերատեսչության կողմից ստացված տեղեկություն ստանալու հարցումների տարեկան վիճակագրությունների հրապարակման աղբյուրները (էլեկտրոնային հղումները):
2. 2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում Ձեր գերատեսչության կողմից ստացված տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության հրապարակման աղբյուրը (էլեկտրոնային հղումները):
3. 2016, 2017 թվականների և 2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում ձեր գերատսչությանը տեղեկություն ստանալու հարցմամբ դիմողներից քանի՞սն են եղել քաղաքացի, քանի՞սը՝ ՀԿ և քանի՞սը՝ լրագրող: Խնդրում ենք տվյալները տրամադրել առանձնացված՝ ըստ նշված ժամանակահատվածների:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան